ՄԿՐՏԻՉ ԽԵԴՈՅԱՆ

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մեր իրականության մեջ կատարվող սոցիալ-տնտեսական վերափոխումների, նոր հասարակարգի կառուցման պայմաններում աստիճանաբար նկատվում է բռնության, դաժանության, հասարակության սակավ պաշտպանված խավերի իրավունքների և ազատությունների ոտնահարման դեպքերի աստիճանական աճ, կտրուկ սրվել են աճող սերնդի դաստիարակության հիմնախնդիրները: Ի հայտ է եկել հասարակության առավել նեղացած, վիրավորված մի խավ, որում ընդգրկվել են ծերերը և երեխաները, հաշմանդամները, անապաստան դեռահասները և պատանիները, մանկատների սաները և դատապարտյալները, փախստականները և այլն: Ստեղծված պայմաններում հոգեբանական և հատկապես իրավաբանական հոգեբանության օրախնդիրն է դեռահասների և պատանիների իրավախախտումների և հանցագործությունների դեմ պայքարի գիտատեսական հիմքերի մշակումը: Անչափահասների շրջանում ներկայումս լայն տարածում են գտել բարոյական անկման այնպիսի ճչացող դրսևորումներ, ինչպիսիք են ալկոհոլամոլությունը, թմրամոլությունը, թափառաշրջիկությունը, մարմնավաճառությունը, մուրացկանությունը, ասոցիալ-քրեածին միավորումների և տարբեր ոչ ձևական խմբերի աճը և այլն: Արդյունքում դեռահասներից ու պատանիներից շատերի մոտ սովորական են դարձել էքսիկական, բարոյական և իրավական նիհիլիզմը, անցյալի արժեքների անտեսումն ու ոտնահարումը, մրցակցությունը ամեն գնով գոյատևելու և անաշխատ եկամուտ ձեռք բերելու համար:

Հոգեբաններ և քրեաբաններ Մ.Ա.Ալեմասկինի, Ս.Ջ. Արզումանյանի, Մ.Ի. Ենիկեևի, Վ.Ֆ. Պիրոժկովի, Վ.Լ. Վասիլևի դիտարկումների համաձայն՝ անչափահասների հանցավոր վարքի կազմավորման գենեզիսը պայմանավորված է արտաքին միջավայրի և անչափահասի անձի փոխազդեցությամբ [4], [5], [7], [8], [10]: Այդուհանդերձ, պետք է նշել, որ իրավախախտ անչափահասները աչքի են ընկնում որոշակի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով: Հետազոտողների մեծամասնությունը գտնում է, որ միջավայրը ազդում է երեխայի վրա՝ միջնորդավորվելով անձի ներքին հոգեբանական առանձնահատկություններով, որոնց ձևավորումը կախված է ժառանգական

նախադրյալների և շրջակա միջավայրի պայմանների փոխազդեցությունից: Սակայն անձի ապասոցիալականացման, նրա ասոցիալ վարքի կազմավորման գործընթացը միշտ չէ, որ իրականանում է միջավայրի անմիջական անբարենպաստ ներգործությունների պայմաններում: Անչափահաս հանցագործների մեծ մասը դաստիարակվում է այնպիսի ընտանիքներում, որոնցում բացակայում են ասոցիալ վարքի անմիջական ցուցադրումները: Դպրոցական միջավայրը, որտեղ տեղի է ունենում անչափահասների առօրյան, նույնպես հիմնականում չի պարունակում բարոյականության նորմերին հակասող վարքի չափանմուշներ: Տվյալ դեպքում տեղ են գտնում անուղղակի ապասոցիալականացնող գործոնները, որոնք դրսևորվում են սոցիալականացման ինստիտուտներից անձի օտարացման, միջավայրի նորմերի և արժեքների նկատմամբ անձի անընկալունակության հետևանքով: Հանցագործի անձի կայացման հոգեբանա-քրեաբանական տեսության մեջ (Ս.Ջ. Արզումանյան) [5] այդպիսի ներգործությամբ պայմանավորված քրեածին դիրքորոշումն անվանում են միջնորդավորված դիրքորոշում:

Ականավոր քրեահոգեբաններ Ա.Ջ. Արզումանյանի, Ա.Ա. Բելիչևայի, Վ.Ֆ. Պիրոժկովի և այլոց կարծիքով դեռահասների և պատանիների սոցիալական դեզադապտացիայի պատճառը նրանց անբարենպաստ սոցիալական զարգացումն է, սոցիոպաթոգենեզը, որը պայմանավորված է միջավայրի, դաստիարակության, կենսաբանական և հոգեբանական անբարենպաստ գործոններով: Ընդ որում, անբարենպաստ սոցիալական զարգացման, սոցիալականացման խաթարումները կարող են դրսևորվել տարբեր ձևերով՝ իրավախախտումներով, հանցագործություններով, ալկոհոլամոլության, թմրամոլության, թափառաշրջիկության և այլ ձևերով, որոնք հատկանշվում են սոցիալական նորմերի շեղման կայուն հակումներում և դրսևորումներում [5], [6], [10]:

Անձի սոցիալականացման խաթարումների, նրա սոցախտահարման դրսևորումների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հանցագործությունները: Առավել հաճախ հանցագործություն են իրականացնում այսպես կոչված դժվար, պրոբլեմային, սոցիալապես և մանկավարժորեն բարձիթողի երեխաները: Այդ անչափահասների արժեքային կողմնորոշումների ձևավորման վրա մեծ ազդեցություն են գործում ընտանեկան դաստիարակության բացթողումները, հասակակիցների, ընկերների շրջապատը, որոնք արդեն հակահասարակական գործողությունների որոշակի փորձ են ունենում, ինչպես նաև նրանց հոգեկանի կառուցվածքում բացասական որակների՝ ծուլության, անպատասխանատվության, ագրեսիվության և այլ հատկանիշների գերակայությունը:

Վ.Լ. Վասիլևի, Յու. Ֆ. Չուֆարովսկու և այլոց կարծիքով դեռահասության տարիքը (11-15 տարեկան) անձի զարգացման անցումային, մարգինալ շրջան է, քանզի այն սեռական հասունացման տարիքն է, որին զուգահեռ հասունանում են նաև օրգանիզմի մյուս կենսաբանական համակարգերը: Դեռահասության շրջանը անձի առաջնային սոցիալականացման շարունակության փուլն է և լի է բազում հակասություններով, ինչն էլ հիմք է հանդիսանում տարիքային ճգնաժամերի և կոնֆլիկտների առաջացման համար, որոնք արտացոլվում են անձի ինքնագիտակցության մեջ:

Պատանեկության տարիքը (14-18 տարեկան) մանկության և հասունության միջև ընկած ժամանակահատված է, որի ժամանակ ավարտին է մոտենում մարդու ֆիզիկական հասունացումը: Պատանեկությունը առաջնային սոցիալականացման ավարտի փուլն է: Պատանիների սոցիալական կարգավիճակի միջանկյալ բնույթը մեծ մասամբ պայմանավորում է նաև նրանց հոգեկանի առանձնահատկությունները: Նրանց առջև ծառանում են անձնային և հասարակական ինքնորոշման, մասնագիտական կողմնորոշման խնդիրները, որոնց լուծումը պահանջում է դաստիարակչական բնույթի համարժեք ներգործություններ, ինչպես դպրոցի, մանկավարժների, այնպես էլ ընտանիքի և առհասարակ նրա միկրոմիջավայրի կողմից [7], [14]:

Այս տեսանկյունից ոչ պակաս նշանակություն ունեն նաև այն ներգործությունները, որոնք միջնորդավորված են անցումային շրջանում գտնվող, փոխակերպվող հասարակության մեջ տեղ գտած մակրոսոցիալական գործընթացներով: Մակրոսոցիալական կառուցվածքների (մշակույթ, քաղաքական և տնտեսական համակարգ) վերափոխումները անհատի վրա ազդում են և՝ անմիջականորեն (վարքի հասարակական կարգավորիչների՝ օրենքների, սոցիալական քաղաքականության, բարոյական արժեքների, նորմերի և ավանդույթների միջոցով) և՝ միջնորդավորվելով փոքր խմբերի կողմից, որոնցում ներգրավված է անձը:

Ս.Զ. Արզումանյանը գրում է, որ մեր կյանքի խոր և պերմանենտ (շարունակական) անբարենպաստ փոփոխությունները արմատապես փոխել են նաև երեխայի վերաբերմունքը ուսման, գիտելիքների, սեփական պարտավորությունների, պարտքի և պատասխանատվության, ընտանիքի և ապագայի, ճշմարտության, արդարության և այլ հասարակական արժեքների նկատմամբ: Այդ բոլոր փոփոխությունները ուղեկցվում են անբարենպաստ հոգեբանական վերափոխումներով, բացասական հոգեբանական նորագոյացություններով, որոնք նախադրյալ են հանդիսանում բարոյական, համակեցության և իրավունքի նորմերից շեղումների համար [1]:

Ըստ Վ.Ֆ. Պիրոժկովի ժամանակից պայմաններում անչափահասների հանցավորության դինամիկան (շարժընթացը) աչքի է ընկնում անհավասարաչափ աճով: Նա նշում է, որ հանցավորության մակարդակը սովորաբար համեմատում են բնակչության աճի դինամիկայի հետ՝ մատնանշելով այն օրինաչափությունը, որ հանցավորության աճը համապատասխանում է բնակչության աճին կամ նվազմանը [10]:

ԱՊՀ որոշ երկրներում կատարված սոցիոլոգիական և հոգեբանական ուսումնասիրությունները վկայում են, որ ներկայումս նկատվում է անչափահասների հանցագործությունների աճ, որն ուղեկցվում է այդ տարիքի բնակչության քանակի նվազման հետ:

Մեր երկրում նման հավաստի վիճակագրական տվյալները մինչ օրս բացակայում են. Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ փաստորեն ճշգրիտ տվյալներ ստանալը գրեթե անհնար է, քանի որ անչափահասների հանցավորությունը բնորոշվում է գաղտնիության բարձր մակարդակով, ինչպես նաև դատահրավական համակարգի թերություններով ու բացթողումներով և հասարակության այլ բացասական սոցախտածին դրսևորումներով:

Ելնելով թեմայի բնույթից՝ մեզ ավելի շատ հետաքրքրում են անչափահասների հանցավոր վարքի կազմավորման շարժընթացի վերափոխումները, որոնք տեղ են գտել նոր տնտեսական, շուկայական և մրցակցային հարաբերությունների անցումային փուլի անմիջականորեն ու միջնորդավորված ներգործության պայմաններում:

Անչափահասների հանցավոր վարքի կազմավորման դինամիկայի իմացությունը կիրառական նշանակություն ունի դրա դեմ պայքարի համարժեք ուղիների մշակման, կանխարգելիչ միջոցառումների սուբյեկտների միջև պարտավորությունների և պատասխանատվության բաշխման և դրանց հետ կապված այլ խնդիրների լուծման համար, որոնց հրատապությունը մեր օրերում կասկած չի հարուցում:

Անչափահասների հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությունը առավելապես գիտակցվում է, երբ քննարկվում է հանցավոր գործողության հոգեբանական կառուցվածքը:

Հանցավոր գործողությունը բարդ կամային գործողություն է, որի հիմքում ընկած են անձի անբարո, անօրինական պահանջմունքներն ու հետաքրքրությունները, ասոցիալ և հակահասարակական դիրքորոշումները, որոնք արարքի հոգեբանական կառուցվածքի հիմքն են կազմում: Վերջինիս վրա կառուցվում են մյուս բաղադրատարրերը՝ հանցավոր գործողության մոտիվացիան և դրդապատճառը, նպատակի ձևավորումը, գործողություն կատարելու որոշման

ընդունումը և հանցավոր մտադրությունը, հանցագործության միջոցների ընտրությունը, նպատակին հասնելը և սուբյեկտի վերաբերմունքը հանցագործության արդյունքի նկատմամբ: Այսինքն՝ հանցավոր գործողության կատարման ներքին հոգեբանական կառուցվածքը անմիջական կապի մեջ է օբյեկտիվ պայմանների, հանգամանքների և նպատակին հասնելու առկա միջոցների հետ [8]:

Հանցավոր մտադրություն, հանցավոր դիրքորոշում, կամ նմանատիպ ցանկություն ունենալը դեռ հանցագործություն չէ: Հետևաբար, եթե լիարժեք գործի կանխարգելման ինստիտուտը, ապա շատ մարդիկ հանցավոր մտադրություններից կհրաժարվեն, կամ անձը կգիտակցի իր արարքի, վարքի սխալ լինելը, հարկադրված կլինի մտածել իր արարքի հասարակական վտանգավորության և պատժվելու անխուսափելիության մասին: Այսինքն՝ հանցարարքը որևէ քրեածին իրադրության արդյունք չէ, այլ օժտված է հասունացման, զարգացման դինամիկայով: Եթե հանցավոր գործողությունը դիտարկում են այս առումով, ապա ակնհայտ է դառնում, որ այդօրինակ վարքագծին նախորդում է մի ժամանակաշրջան, երբ անձը սոցիալապես ախտահարվում է և ձեռք բերում հասարակայնորեն ոչ համարժեք որակներ ու հատկանիշներ, պատկերացումներ, հայացքներ ու համոզմունքներ, բնավորության գծեր, որոնք կարող են դառնալ ապագա անօրինական վարքի սոցիալ-հոգեբանական նախադրյալներ:

Անչափահասների իրավախախտումների և հանցագործությունների վերաբերյալ բազմաթիվ հոգեբանական հետազոտությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանց անձը և վարքը հատկանշող մի շարք որակներ ու հատկություններ սոցիալական ախտահարվածության ցուցանիշներ են, որոնք բնորոշ են նաև չափահաս հանցագործներին: Դրանք են ներքին քողարկված (երբեմն էլ բացահայտ) նենգությունը, չարությունն ու չկամությունը, անբարյացակամությունը, ուրիշի անհաջողությամբ ուրախանալը, հուզական անտարբերությունն ու սառնությունը, անգթությունն ու դառնությունը, եսամոլությունը, անսկզբունքայնությունը, երկերեսայնությունը և շողոքորթությունը, սեփական կարծիք չունենալը, ստախոսությունը, անհավատարմությունը և անամոթությունը, հանդուրժողականությունը չարի, նեգատիվ երևույթների նկատմամբ, ագրեսիվությունը, ցինիկությունը, անպատկառությունը, լկտիությունը, տգիտությունն ու անշնորհակալությունը և նմանատիպ բազմաթիվ այլ որակներ, պատկերացումներ և կողմնորոշումներ, որոնք արտահայտում են անձի սոցիալական ախտահարվածության սակավ կամ ավել աստիճանը: Այնուհետև, քանի որ անձնային և վարքագծային այդպիսի

դրսևորումները արդեն վկայում են հասարակական հարաբերություններում որոշակի խաթարումների մասին, ապա դրանք իրենց մեջ պարունակում են բարոյաանհնազանդ և իրավաանհնազանդ վարքի հոգեբանական նախադրյալներ, որոնք կարող են խորացման միտումներ ձեռք բերել: Վերջիններս կարող են ձեռք բերել և հանցավոր ուղղվածություն, երբ բացակայում են կամ սակավ արդյունավետ են կազմակերպված պրեվենտիվ (կանխարգելիչ) միջոցառումները:

Սոցիալական ախտահարումն արտահայտող անձնային և վարքագծային նշված անբարենպաստ որակները շեղվող վարքի հոգեբանական տեսության և մեր հետազոտական տվյալների համաձայն ձևավորվում են մանկական տարիքում, սոցիալական անբարենպաստ ներգործության պայմաններում: Վերջիններս որոշակիորեն նպաստում են անձնային ուղղվածության այլափոխումներին, որոնք արտահայտվում են սոցիալական ոչ համարժեք մտքերի ու գաղափարների, անօրինական պահանջմունքների, նպատակների և դրդապատճառների տեսքով:

Անչափահասների հանցավոր վարքի կազմավորման շարժընթացն ուսումնասիրելու նպատակով մեր կողմից իրականացվել է տարբեր բնույթի հանցագործություն իրականացրած անչափահասների հոգեբանական փորձարարական ուսումնասիրություն, որին մասնակցել են 64 անչափահասներ: Վերջիններս իրենց կատարած հակահասարակական արարքների համար դատապարտվել էին ազատազրկման, և պատիժը կրում էին ՀՀ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են դիտման, զրույցի մեթոդները, «Անավարտ նախադասությունների մեթոդիկան», «Անձի ուսումնասիրության կենսագրական մեթոդը», «Կետտելի 16 գործոնային անձնային հարցարանը», «Անձի ուսումնասիրության FPI հարցարանը», «Տուն, ծառ, մարդ», «Գոյություն չունեցող կենդանի» պրոյեկտիվ մեթոդները [3], «Անչափահասների դրական և բացասական դիրքորոշումների փորձարարական ախտորոշման պատմվածք-իրադրությունները» (Ս.Ջ. Արզումանյան) [5], «Անչափահասների սոցիալականացման առանձնահատկությունների ուսումնասիրության հարցարանը» (Դ.Վ. Յարցև) [15]:

Ուսումնասիրվող դատապարտյալների դեզադապտիվ վարքի ուսումնասիրության համար կիրառվել է Ստոտի դիտման քարտի ձևափոխված տարբերակը: Այն նախատեսված է սոցիալական դեզադապտացիայի ախտորոշման համար: Առանձնացվում է դեզադապտացիայի երեք հիմնական ձև. արտաքին վարքագծային, ներքին հոգեբանական և խառը: Ստոտի դիտման քարտը

հնարավորություն է տալիս գնահատել անչափահասի դեզադապտացիայի աստիճանը և բնույթը 16 ախտանիշների համալիրների հիման վրա [9]:

Կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ անչափահասների իմացական և տնտեսական գործունեության պահանջմունքների միջև որոշակի հակասություն կա, ինչը պայմանավորված է սոցիալականացման ինստիտուտների ռեֆերենտային գործառույթների թուլացմամբ, որոնք չեն կարողանում ձևավորել անչափահասների հասարակական կողմնորոշումները: Ներկայումս հաճախ են հանդիպում այն դեպքերը, երբ անչափահասը ցանկանում է զբաղվել տնտեսական գործունեությամբ, առևտրով, ինչի համար ստիպված է լինում թողնել դպրոցը, կրթությունը: Նման դեպքերում ընտանիքը հաճախ չի ընդդիմանում, երբեմն նույնիսկ խրախուսում է անչափահասի նման ցանկությունը: Արդյունքում անչափահասը հայտնվում է սոցիալապես և մանկավարժորեն բարձիթողի վիճակում, ներգրավվում է տարաբնույթ ասոցիալ խմբերում և յուրացնելով նրանց նիստուկացը, դիմում է տարբեր իրավախախտ գործողությունների:

Գրականության վերլուծությունը և մեր կողմից իրականացված փորձարարական ուսումնասիրությունները հնարավորություն են տվել առանձնացնել մի շարք գործոններ, որոնք պայմանավորում են անչափահասների վերաբերմունքը սոցիալ-տնտեսական պայմանների նկատմամբ և միջնորդավորվելով անձի բացասական հոգեբանական որակներով, նրանց ասոցիալ վարքի սոցիալ-հոգեբանական նախադրյալ են հանդիսանում.

1. Հասարակության կուլտուր-կրթական և նյութական մակարդակը: Ս.Ջ.Արզումանյանի կողմից մանրամասնորեն վեր են լուծվել այն օբյեկտիվ անբարենպաստ գործոնները, որոնք արտացոլելով սոցիալական հակասությունները, կործանարար ազդեցություն են գործում անչափահասների բարոյական գիտակցության և հասարակական կողմնորոշումների ձևավորման վրա [2]:

2. Հասարակական արժեքներն ու դիրքորոշումները, որոնք վերաբերում են նյութական բարեկեցությանը և փոխանցվում են երեխային ծնողական խրատների, դպրոցական դաստիարակության կամ սոցիալականացման այլ ինստիտուտների միջոցով: Անչափահասների մոտ շահադիտական ուղղվածությամբ վարքի շեղումները (ժլատություն կամ շռայլություն, մոլի խաղերի հանդեպ ունեցած անհաղթահարելի կիրք, արժեքավոր իրեր ձեռք բերելու սևեռուն մտքեր և այլն), պայմանավորված են անձի սոցիալականացման ինստիտուտների բացթողումներով, որոնք միջնորդավորվելով անձի հոգեբանական առանձնահատկություններով, հիմք են հանդիսանում նրանց ասոցիալ վարքի կազմավորման համար: Մեծահասակները երբեմն իրենց վերաբեր-

մունքը երեխայի հանդեպ դրսևորում են փողի միջոցով՝ երեխայի հաջողությունները դրամով խրախուսելով: Հատկապես փողին վերաբերող խրատները հաճախ երկիմաստ, անհասկանալի և անհետևողական բնույթ են կրում:

3. Տվյալ հասարակության մեջ գերիշխող սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Արտասահմանյան հոգեբաններ է.Ֆրոմի, Կ. Հորնիի, Վ. Ֆրանկլի [11-13] և այլոց հետազոտությունները վկայում են, որ անձի գիտակցության խաթարումները, աշխարհի և մարդկանց նկատմամբ վերաբերմունքի խեղաթյուրումները, ոչ համարժեք դիրքորոշումները և իրադարձությունների մեկնաբանության սխալ մոդելները պայմանավորված են կապիտալիստական հասարակության, մրցակցության, շուկայական հարաբերությունների և դրանցից բխող այլ նեգատիվ երևույթներով:

4. Անչափահասների անմիջական մասնակցությունը տնտեսական գործունեությանը (առևտուր, գրպանի դրամ և այլն): Կարելի է ենթադրել, որ առևտրի և տնտեսական այլ գործառույթների դերի չհասկացումը, դրանց ոչ համարժեք ընկալումները կարող են հիմք հանդիսանալ անձի մոտ բազմաթիվ բացասական նորագոյացությունների առաջացման համար: Մեր դիտարկումների ժամանակ հաճախ ենք բացահայտել այնպիսի դեպքեր, երբ անչափահաս իրավախախտներից շատերը բավականին անտեղյակ են եղել իրենց հակահիրավական, հակահասարակական արաքներից տուժած մարդկանց եկամուտներին, դրանց ձեռքբերման միջոցներին, ինչը հաճախ նույնիսկ քննադատվել և չի ընդունվել ոչ միայն իրավահնազանդ քաղաքացիների, այլև նույնիսկ ավելի տարեց ու փորձառու հանցագործների մի մասի կողմից:

5. Հասարակության զարգացման անցումային շրջանը, իրեն բնորոշ սոցախտածին դրսևորումներով: Անցումային շրջանի տասնամյա տարիների ընթացքում մեծացավ երեխաների մի ամբողջ սերունդ, որը բացի ծգնաժամից ոչինչ չէր տեսել: Անցումային շրջանն ուղեկցվեց դրամական ռեֆորմներով, հասարակության որոշակի զանգվածի ֆինանսական ահռելի վայրիվերումներով: Դա հղի է ինչպես դրական, այնպես էլ բացասական մի շարք հետևանքներով. մի կողմից երեխայի մեջ ձևավորվում է ըմբոստություն ֆանատիզմի, գաղափարական կապերի, վարքի կարծր ստերեոտիպերի նկատմամբ, իսկ մյուս կողմից երեխայի մեջ կարգուկանոն չի ձևավորվում, նա ցինիկ, անպատկառ է մեծանում, քանի որ վստահ է, թե կարող է դուրս պրծնել ցանկացած իրադրությունից:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի շրջադարձային փոփոխությունները չեն կարող չանդրադառնալ նաև դեռահասների և պատանիների հանցավոր վարքի նախազգուշացման և հաղթահարման պրակտիկայի վրա, որի վերակառուցման անհրաժեշտությունը ձեռք է բերում հույժ կարևորություն:

Նախկինում գոյություն ունեցող պատժիչ, ուղղիչ կանխարգելումը, որը հիմնված էր սոցիալական հսկողության և քրեական պատժի վրա, ներկայումս առավել նպատակահարմար է փոխարինել դեռահասների ու պատանիների համարժեք հասարակական-իրավական, հոգեբանական և մանկավարժական աջակցությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների համակարգով: Վերջինիս իրականացումը հնարավոր է միայն մի շարք կազմակերպչական, մանկավարժական, հոգեբանական, իրավական խնդիրների լուծման միջոցով:

Կազմակերպչական ապահովումը ենթադրում է տարբեր սոցիալական ինստիտուտների միջև միջգերատեսչական մասնատվածության հաղթահարում և իրավասու պետական մարմինների ստեղծում, որոնք պետք է կոչված լինեն իրականացնելու ընտանիքի երեխաների պաշտպանության գործառույթը: Կազմակերպչական խնդիրների լուծումը ենթադրում է նաև սոցիալական աշխատողների և մանկարավարժների, գործնական հոգեբանների պատրաստում և վերապատրաստում, որոնք իրավասու կլինեն իրականացնելու մասնագիտակյան սոցիալական, հոգեբանական և մանկավարժական օգնությունը:

Մանկավարժական ապահովումը ենթադրում է դեռահասների և պատանիների հանգստի և զբաղվածության ճիշտ կազմակերպման նպատակով համապատասխան սոցիալ-մանկավարժական կենտրոնների ստեղծում:

Սոցիալ-հոգեբանական ապահովման էությունը ընտանիքին, դեռահասներին և պատանիներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման մեջ է: Այն ներառում է հոգեբանական խորհրդատվություն, կոնֆլիկտային իրավիճակների լուծում, վստահության հեռախոսների ստեղծում, շեղվող վարքի վաղ հոգեախտորոշում և շտկում: Հոգեբանական ծառայությունները նպատակահարմար է իրականացնել նաև անչափահասների ազատազրկման վայրերում՝ նրանց սոցիալ-հոգեբանական վերականգման աշխատանքների կազմակերպելու նպատակով:

Իրավական ապահովումը ներառում է գործուն իրավական նորմերի և մեխանիզմների ստեղծում, որոնք հնարավորություն կտան գործնականում իրագործել անչափահասների իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև կնպաստեն անչափահաս իրավախախտների դատական-պենիտենցիար համակարգի բարելավմանը:

Այս հիմնահարցերի լուծման դժվարությունների շարքում, ֆինանսական և նմանօրինակ այլ խնդիրների հետ մեկտեղ պետք է նշել ներկայումս պրեվենտիվ պրակտիկայի և տեսության միջև առաջացած բաժանումը: Մի կողմից նկատվում է պետության կողմից ուշադրության աճ այս ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ, իսկ մյուս կողմից հաճախ անչափահաս

հանցագործների հետ տարվող աշխատանքներում հաշվի չի առնվում այն հարուստ փորձը, որը կուտակվել է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական հոգեբանների, մանկավարժների ուսումնասիրություններում: Դա մեծապես խոչընդոտում է կանխարգելիչ միջոցումների արդյունավետությանը: Այդ իսկ պատճառով դեռահասների և պատանիների հետ տարվող սոցիալ-հոգեբանական կանխարգելիչ և վերականգնողական աշխատանքների գիտական հիմնավորվածության ապահովման համար այսօր անհրաժեշտ է միավորել և համակարգել անչափահասների հանցավոր վարքի բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքները և դրանք ներդնել պրեվենտիվ պրակտիկայում:

Սոցիալ-հոգեբանական ապահովման ստեղծումը կանխարգելիչ գործունեության արդյունավետության բարձրացման կարևորագույն նախապայմանն է: Այն պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով.

1. անչափահասների ասոցիալ վարքի և սոցիալական դեզադապտացիայի հոգեբանական ախտորոշում,
2. շեղվող վարքի հոգեշտկման տարբերակված մոտեցումների կիրառում,
3. անչափահասների ապասոցիալականացնող, անբարենպաստ գործոնների բացահայտում և չեզոքացում:

Դա ենթադրում է անչափահասների վարքի խաթարումները պայմանավորող անձնային և սոցիալ-հոգեբանական գործոնների համակարգային վերլուծություն, որոնց համապատասխան պետք է իրականացվեն կանխարգելիչ և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքները:

Այսպիսով, կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ դեռահասների և պատանիների հանցավոր վարքի ձևավորումը պայմանավորված է ինչպես կենսաբանական, ժառանգական և հոգեբանական գործոններով, այնպես էլ տարատեսակ անմիջական և միջնորդավորված հասարակական նեգատիվ ներգործություններով: Վերջիններիս շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նոր տնտեսական հարաբերությունները և անձի սոցիալականացման ինստիտուտների ոչ լիարժեք կենսագործունեությունը, որոնք ժամանակակից պայմաններում ենթարկվելով զգալի որակական և քանակական վերափոխումների՝ որոշակիորեն թուլացրել են իրենց կարգավորիչ և վերահսկիչ ֆունկցիան, մեծամասամբ դադարելով ռեֆերենտ դեր խաղալ անչափահասների համար և անուղղակիորեն նպաստելով անչափահասների ոչ համարժեք դիրքորոշումների ձևավորմանը: Վերջինս բազմաթիվ ուսումնասիրություններում դիտարկվում է որպես ասոցիալ վարքի ձևավորման նախադրյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արզումանյան Ս. Զ. Դեռահասների հանցածին վարքագծի դիրքորոշումների կազմավորման գենեսիզի հոգեբանական նախադրյալները. Հոգեբանությունը և կյանքը. 2000 N 1, էջ 29-36:
2. Արզումանյան Ս.Զ. Հասարակական նեգատիվ երևույթները որպես անձի սոցիալիզացիայի վճռորոշ գործոններից մեկը: Հոգեբանության և մանկավարժության արդիական հիմնախնդիրներ: Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու. Գյումրի. 2003. էջ 14-18:
3. Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ. Կիրառական հոգեբանության պրակտիկում. Երևան, 2002. էջ 294-297:
4. Алемаскин М.А. Психологическая характеристика несовершеннолетнего правонарушителя. Канд. Диссертация, М., 1967.
5. Арзуманян С.Д. Психолого-криминологическая теория становления личности правонарушителя (Генезис криминогенных установок и их ранняя профилактика), Ереван, 2000.
6. Беличева С.А. Основы превентивной психологии, М., 1994, с. 45-60.
7. Васильев В.Л. Юридическая психология. СПб, 2003.
8. Еникеев М.И. Юридическая психология, М., 2003.
9. Корнилова Т.В., Смирнов С.Д., Григоренко Е.Л. Факторы социального и психологического неблагополучия подростков в показателях методик стандартизованного интервью и листов наблюдения, Вопросы психологии, 2001, N 1, с. 107-122.
10.Пирожков В.Ф. Криминальная психология. М., 1998.
11.Франкл В. Человек в поисках смысла. М., 1990.
12. Фромм Э. Человеческая ситуация. М., 1995.
13. Хорни К. Невроз и развитие личности. М., 1997.
14. Чуфаровский Ю.М. Юридическая психология, М., 1997.
15. Ярцев Д.В. Особенности социализации современного подростка, Вопросы психологии, 1999, N 6, с. 54-58.